

2014 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է թիվ 564-Ն որոշումը /ուժի մեջ է մտել 2014թ. հունիսի 12-ին/՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: Այդ որոշման համաձայն մինչև հուլիսի 31-ը գորացրվող զինծառայողներն իրավունք են ստանում մասնակցել բուհերի տվյալ տարվա ընդունելության մրցույթին՝ մինչև գորակոչվելն ստացած միասնական քննությունների վկայագրով՝ օգտվելով բանակից գորացրվածների համար սահմանված արտոնություններից:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման 107 կետի համաձայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից գորացրված դիմորդները գորացրվելուց հետո 3 տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս՝ առանձին մրցույթով՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված և բանակից գորացրվածների համար ըստ մասնագիտությունների տրամադրված տեղերում: Անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով: Եթե բանակից գորացրված դիմորդները հայտագրել են միայն վճարովի ուսուցման տեղերի մասնագիտություններ, բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

Բանակից գորացրվածների համար, համաձայն ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման 24 կետի, բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար բուհերում դիմում-հայտ լրացնելու և փաստաթղթերը ներկայացնելու ժամկետ է սահմանված հունիսի 25-ից հուլիսի 2-ը:

ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2014թ. մայիսի 29-ի թիվ 564-Ն որոշման համաձայն՝

1. ուլթեր են կարող դիմել բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար.
բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել տվյալ տարվա գարնանային-ամառային գորացումից մինչև հուլիսի 31-ը գորացրվող զինծառայողները, եթե նրանք ունեն մինչև գորակոչվելը ստացած միասնական քննությունների վկայագիր:
2. Չգորացրվող զինծառայողները երբ կարող են դիմել բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար.
գորացրվող զինծառայողները լիազորված անձի միջոցով հունիսի 25-ից հուլիսի 2-ին կարող են դիմել այն բուհ, որն առաջինը պետք է հայտագրեն իրենց դիմում-հայտում:
3. Ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն գորացրվող զինծառայողները՝ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար.
գորացրվող զինծառայողները պետք է ներկայացնեն
 - գորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ զինծառայողի գորացումը տեղի է ունենալու մինչև հուլիսի 31-ը /կից ներկայացվում է գորամասի հրամանատարի կողմից տրվող տեղեկանքի նմուշը/,

- գորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագիր, որը լիազորագրում նշված անձը ներկայացնում է բուհի ընդունող հանձնաժողովին /կից ներկայացվում է լիազորագրի նմուշը/ և բուհի ընդունելության դիմում-հայտում հայտագրում է բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության մասնագիտությունները՝ լիազորագրում նշված հերթականությամբ,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 6 հատ 3x4 չափսի լուսանկար:

Տեղեկանք

Մույն տեղեկանքը տրվում է զինծառայող

_____ -ին,

անուն, հայրանուն, ազգանուն

ծնված _____, անձնագրի համար _____,

առ այն, որ նա զորացրվելու է մինչև 2015թ. հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:
Մույն տեղեկանքը տրվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության
26.04.2012թ. թիվ 597-Ն որոշման 40 և 107 կետերի՝ բուհերի ընդունելության 2015թ. հուլիսին
տեղի ունեցող մրցույթին մասնակցելու և պարտադիր ժամկետային զինվորական
ծառայությունից զորացրված դիմորդների արտոնություններից բուհերի ընդունելության
մրցույթում օգտվելու համար:

_____ զորամասի

հրամանատար՝ _____

անուն, ազգանուն, ստորագրություն

կ.տ.

<< >> _____ 2015թ.

Լիազորագիր

Ես՝ _____
անուն, հայրանուն, ազգանուն

ծնված _____,

անձնագիր _____,

լիազորում եմ _____-ին,
անուն, հայրանուն, ազգանուն

ծնված _____,

անձնագիր _____,

Հայաստանի Հանրապետության կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշման 40 կետի համաձայն սույն թվականի հունիսի 25-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերս ներկայացնել բուհի ընդունող հանձնաժողովին և բուհի ընդունելության դիմում-հայտը իմ անունից լրացնել՝ նշելով բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության մասնագիտությունները հետևյալ հերթականությամբ.

_____ :

Սույն լիազորագիրը տրվում է մինչև հուլիսի 2-ը ժամկետով:

Լիազորագիրը տրվել է << >> _____ 2015թ.

Լիազորող անձ՝ _____
անուն, ազգանուն, ստորագրություն

Լիազորագիրը հաստատված է _____ գորամասի հրամանատարի

կողմից _____ Կ. Տ
անուն, ազգանուն, ստորագրություն